

# Իրավունք մշակույթ

Չկա Հասարակության  
անանց իրավունքի  
Ubi societas ibi jus

Երկշաբաթեր  
թիվ 2 (22)  
2008 թ. փետրվար 15

## ՎԵՐՍԻՆ. ԱՆՊԱՏԿԱՌՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՎԵՍՏՈՒՄ ՉԱՓՈՐՈՇԻՉ ՉԷ՝

Վերջերս բանակի օրվա կապակցությամբ Հանրային հեռուստատեսության առաջին այի-  
քով դարձյալ, արդեն երրորդ անգամ ցուցադրվեց «Մի՛ վախեցիր» հինգ մասից բաղկացած  
շարժանկարը: Եվ դա այն դեպքում, երբ անազանազան բազմաթիվ հոդվածներն ու հաղորդում-  
ներն ակնհայտ են դարձրել, որ այդ շարժանկարը ոչ միայն պիտանի չէ, այլև, ընդհակառակը,  
վնասում է Մեր պետական, ազգային ու հասարակական հիմնախնդիրների, մասնավորապես՝  
կրթության, մշակույթի և երիտասարդության դաստիարակության կարևորագույն խնդիրների  
լուծման գործին:

Եվ դրաեզի իրավասու պաշտոնյաները հաստատապես լսեն բողոքի անազանը, հար-  
կադրված ենք վերստին տպագրել այդ շարժանկարին վերաբերող, թեթևակի վերախմբագր-  
ված «Անպատկառությունն արվեստում չափորոշիչ չէ» վերտառությամբ հոդվածը (Իրավական  
մշակույթ, թիվ 11):

Մարդկային անկապտելի իրավունքների  
թվում Մարդու իրավունքների համընդհանուր  
հռչակագիրը ներառում է որևէ միջամտություն  
ից ու ունենալուցից անհատի անձնական ու  
ընտանեկան կյանքի, պատվի ու արժանա-  
պատվության պաշտպանության իրավունքը  
(հոդված 12): Ասկայն այսօր յուրաքանչյուր  
բնակարանում տեղադրված հեռուստացույցի  
միջոցով շարունակաբար ու անպատիժ ոտնա-  
հարվում են անհատի ու նրա ընտանիքի պա-  
տիվն ու արժանապատվությունը՝ խարխլելով  
ազգային ավանդույթներն ու քրիստոնեական  
բարոյականության նորմերը, կործանարար  
ներգործություն ունենալով աճող սերնդի կր-  
թության ու դաստիարակության գործի վրա:

Տարիներ շարունակ որոշ «գործարարներ»  
այլոց «բողոքկած» բափնները՝ հայրատա-  
խառն պատկերները, անառակամետ խոտան  
թարգմանությունները նույն հեռուստացույց  
խողովակով անաղարկ ներարկում են մեր  
բնակարաններն ու բունավորում հասարակու-  
թյունը՝ դերելով, ի չիք դարձնելով կրթության  
ու դաստիարակության ոլորտում իրականաց-  
վող ծրագրերը, միջոցներն ու ջանքերը: Եվ հի-  
մա, երբ հասարակությունը բավական «վար-  
ժեցվել» է այդ «մշակույթից», մենք ակամատես  
ենք դառնում մեր սեփական «արտադրանքին»:

Շարժանկարը հանցավորությունը, իրավա-  
խախտումը, պետականության ձևավորման  
գործընթացի բացասական դրսևորումները՝  
իրավապահ մարմինների սերտաճումը քրեա-  
կան տարրերի հետ ու ռիթ, անիրավության մը-  
նուղորտը պատկերելով, փաստացի խրախու-  
սում է դրանք: Օրինակ՝ զինվորական գեներա-  
լը հայիոյախառն հեռախոսագրույցից հետո  
առանց որևէ դատի, որոշման կամ հրամանի  
կախնավայրից դուրս է բերում իրավախախ-  
տում կատարած իրամանատարին... Այո, ցա-  
վոք, այդպես էլ է եղել, բայց չէ՞ որ եղել են նաև  
և, բարեբախտաբար, առավելապես եղել են  
առողջ գործընթացներ և օրինական, իրավա-  
հիմն որոշումներ ու գործողություններ: Եվ, վեր-  
ջապես, մի՞թե դա է եղել և է բնորոշը, մի՞թե  
անիրավությունը, անօրենսությունն է դրականը,  
որ արդեն երրորդ անգամ ցուցադրվում է Հան-  
րային առաջին ալիքով և վաճառվում: Դժվար է  
պատկերացնել հայոց պետականության վերա-  
կանգնման նորագույն պատմության ավելի մեծ

ենթագիտում, հայիոյություն, որպիսին «Մի  
վախեցիր» շարժանկարն է:  
Ինչու՞ է գլխավոր դերում քրեական հանցա-  
գործի կերպարն ընտրվել. մի՞թե մեր անկախու-  
թյան այս փոքրիկ պատերազմում այլ օրինակ-  
ներ չունենե՞ք... Մեր ո՞ր գորավարն է հանցագործ  
աշխարհից սերել. Վարդան Մամիկոնյա՞նը,  
Դավիթ Բե՛կը, Լիկո՛ւ Դումա՞նը, Գարեգին Լժ-  
դե՛հը, թե՛ Անդրանիկը:

Դարձյալ՝ հայիոյել գիտեն շատերը, բայց մի՞-  
թե դա է բնորոշը մեզ համար: Մի՞թե դա է ա-  
յսօրվա հայ մտավորականի ընտանիքը, մի՞թե  
դա է Արցախն ազատագրած զինվորի կերպա-  
րը: Մի՞թե Մովսես Գորգիսյանը, Սոնթե Մելքոն-  
յանը, Թաթուլ Կրպեյանը, Սամվել Շահմուրադ-  
յանը, Լորիկ Մուրադյանը, արյան կանչով ելած  
ու կյանքը Հայրենիքին նվիրած մեր հազարա-  
վոր նահատակներն այդպիսին են եղել: Ո՛չ, և  
բնավ ո՛չ: Մեր դասականները՝ Րաֆֆին, Դե-  
միտրյանը, Ջորյանը, հանգաղյանը, մի ողջ սե-  
րունդ դաստիարակած իրենց պատմավեպե-  
րում ի՞նչ լեզվով են խոսեցնում իրենց հերոսնե-  
րին՝ իշխաններին, նախարարներին, զորավար-  
ներին, շինականներին ու զինվորներին...

Կունենալի՞նք արդյոք Արցախյան մեր, հիրա-  
վի, ԱՆՎԽՈՒԹՅԱՆ ՊԱՏԵՐՎԱԶՈՒՄ հարթած  
հերոսներին, եթե դասականները հայիոյանցներ  
դենին իրենց հերոսների շուրթերին... Այս իմաս-  
տով, Արցախյան պատերազմի հերոսներին  
ծնել, կերտել են հենց Րաֆֆին, Դեմիտրյանը,  
Ջորյանը, հանգաղյանը... Դու՞ք ինչ եք ծնելու  
մեր շարախորհրդող արտադրանքով...

Ո՞րն է արվեստի ու մշակույթի դերը. Գեղեցի-  
կով ու Բարիով կորեն ու դաստիարակել մա-  
տաղ սերունդը, զարգացնել մշակույթը: Գուցե  
շարժանկարի հեղինակները ինչ-որ նորահայտ  
«նեոռեալիստական» ուղղություն են դավա-  
նում: Ոչ ոք չի ժխտում Բարու դեմ ապստամբած  
չարի գոյությունը: Խնդիրն այն է, թե ո՞րն եք  
դուք ընտրում և ինչով եք սնում հասարակու-  
թյանը, մեր մանուկներին: Եթե դուք չարն եք էկ-  
րանավորում, ուրեմն դա եք ընդօրինակելի հա-  
մարում...

Հավանաբար, որոշ մարդիկ կարծում են, թե  
եթերից, էկրանից կամ մամուլով հանդես գալու  
հաջողության գրավականն առավել անգուսպ,  
առավել անպատկառ ու առավել ամբարտա-  
վան պահվածքն է... → էջ 7

### ՉԱՅՆ ԱԵԾԱՅ

«Դարձեալ՝ մեր լեզուն  
սատանայի գործիքի մի՛  
վերածե՛ք՝ չար և դառը  
հայիոյանքներով, մա-  
նաանդ՝ որոնցով ա-  
նարգում է թէ՛ հավատ-  
քը, թէ՛ ճոգին, թէ՛ Ա-  
լազանի մկրտութիւնը,  
թէ՛ մկրտիչ քահանան,  
թէ՛ անձը և թէ՛ բերա-  
նը...»



Սուրբ Ներսես Ընդրիակի

Ձեր մանուկներին Աստուծոյ երկիրով սնուցե՛ք խրա-  
տելով նրանց, որ մանուկ տարիքից լինեն Աստուածա-  
սէր, ողորմած եւ աղօթասէր: Աղօթք սովորեցրէ՛ք նրանց  
եւ սաստեցէ՛ք, որ աղտոտ խոսքեր և հայիոյանքներ  
չսովորեն...»

### Ա Յ Ս Հ Ա Մ Ա Ր Ո Ւ Մ

- Իրավունքը և մարդու իրավունքները աշխարհում \_ էջ 2
- Տարածքային զարգացման ճանապարհին \_\_\_\_\_ էջ 3
- Տեղեկատվությունը պետք է մատչելի լինի \_\_\_\_\_ էջ 4
- Եվրոպայի խորհրդի խոշտանգումների կանխարգելման հանձնաժողովի գեկույցը Հայաստանի վերաբերյալ \_\_\_\_\_ էջ 4
- Ավարտվեց Մարդու իրավունքների հայկական դպրոցի 13-րդ ուսումնական դասընթացը \_\_\_\_\_ էջ 5
- Լևոն Սարգսյան. «Գլոբալ «ա»ացում» \_\_\_\_\_ էջ 6
- Հոգեհանգստի խորհուրդը \_\_\_\_\_ էջ 7
- Տյառնընդառաջ \_\_\_\_\_ էջ 7
- Ին բաժին քարը Մարդու իրավունքների հայկական դպրոցի շենքին \_\_\_\_\_ էջ 8
- Տեղեկույթ, ազդ, հայտարարություններ \_\_\_\_\_ էջ 8

Թերթի նախորդ համարում տպագրել էինք Սբ. Ներսես Ընդրիակու «Թուղթը ընդհանրական»-ից «Հայոց իշխաններին» ուղղված հատվածը: Թերթի համարը առանձին նամակներով միաժամանակ ուղարկել ենք ՀՀ նախագահի բոլոր թեկնածուներին՝ ակնկալելով նրանց պատասխանները, որոնք խոստացել էին տպագրել: Ոչ մի թեկնածուից դեռևս պատասխան չի ստացվել:



# Իրավունքը և մարդու իրավունքներն աշխարհում

## ՄԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՉ ՀՆՆՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՔԱՐՈՉԱՐՇԱՎԻ ԵՐՐՈՐԳ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՎԵՀԱՄԺՈՂՈՎ

ՄԱՐԴՈՒԹ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՕՐԱՅՈՒՅՑ  
Փետրվարի 20 - Խաղաղ դիմադրության օր  
Փետրվարի 21 - Մայրենի լեզվի միջազգային օր

2008 թ. հունվարի 22-24-ը Բրազիլիայի Սաո Պաուլո քաղաքում կայացավ 7ամենամյա լոյս համուն կրթության (3434) քարոզարշավի 3-րդ համաշխարհային վեհաժողովը, որին մասնակցեցին 85 երկրների քաղաքացիական հասարակության և 31 միջազգային կազմակերպությունների շուրջ 180 ներկայացուցիչներ: Վեհաժողովում 3434 հայաստանյան ազգային կողմից հանրապետության 30-ամյա նախագահ Գևորգ Մանուկյանը:



Վեհաժողովի նպատակն էր քննարկել 3434 քարոզարշավի միջոցով ձեռք բերված առաջընթացը կրթության ոլորտում և որոշել դրա հետագա ռազմավարությունները: Ենթադրյալ համաժողովի ընթացքում դիտարկվեցին համընդհանուր կրթության առանձին նպատակները, դրանց ուղղությամբ աշխարհի տարբեր տարածաշրջաններում կատարված աշխատանքները, ինչպես նաև կառավարությունների հետ աշխատանքի, ազգային դաշինքներն ընդ-

լայնելու և ՋՄԱ-ների հետ համագործակցելու համար անհրաժեշտ գործողությունները:  
2004 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից կայացած նախորդ վեհաժողովից հետո 3434 անդամների թիվն ավելի քան կրկնապատկվել է: Այնուամենայնիվ, որ անող և հզորացող քաղաքացիական հասարակության շարժումը զգալիորեն նպաստել է համընդհանուր կրթությանը. դպրոցից դուրս մնացած երեխաների թիվը 100 միլիոնից (2000 թ.) նվազել է մոտ մինչև 72 միլիոնի (2007 թ.), սակայն, ինչպես փաստում է 2007 թ. ղեկավարների իրավաբանական 3ամաշխարհային դպրոցական զեկույցը, առավել մեծ առաջընթացի համար քաղաքացիական կամքի դրսևորում է անհրաժեշտ, այլապես հնարավոր չէ լինի հասնել համընդհանուր կրթության նպատակին անգամ հաջորդող տասնամյակների ընթացքում:  
3434 անդամների կողմից վեհաժողովին ներկայացվել, քննարկվել և որոշ փոփոխություններով ընդունվել են կրթության թեմաների ավելի քան 10 նոր առաջարկներ, որոնք մինչև հաջորդ 2011 թ. նախատեսված համաշխարհային վեհաժողովը լինելու են 3434 գործունեության առաջնահերթ ոլորտներ: Այդ առաջարկների բլում է նաև 3434 հայաստանյան դաշինքի կողմից ներկայացված

Մարդու իրավունքների կրթության թեման: Վեհաժողովի պատվիրակներն առանց որևէ առարկայի համաձայնեցին, որ մարդու իրավունքների կրթությունն առաջնահերթ ու կարևորագույն միջոց է մարդկային կայուն զարգացման ու աղքատության հարթահարման համար: Վեհաժողովը ընտրեց 3434 նոր խորհուրդ, որը կազմակերպելու է համաշխարհային վեհաժողովի կողմից ընդունված ռազմավարական ուղղությունների իրականացման գործողությունները:  
Վեհաժողովը եզրակացվեց 3434 բոլոր անդամների համուն համընդհանուր կրթության պայքարի կողմ:

### Մեծահասակների կրթության միջազգային խորհրդի գործողությունների կոչը

Ազգային բանալին մարդկանց արժանապատվությունը, նախաձեռնությունը ու գործողություններն են:

Սովոր ի խորակառուցումից գերծ աշխարհի կերտումը հնարավոր կլինի, երբ յուրաքանչյուր քաղաքացի հնարավորություն ունենա կենսագործելու ողջ կյանքի ընթացքում սովորելու և կարողությունները զարգացնելու իր իրավունքը:  
Մեր համընդհանուր ապագան վտանգի տակ է, քանի դեռ լիարժեք չի իրականացվել բոլոր մայրցամաքներում, յուրաքանչյուր երեխայի տարրական կրթության իրավունքը: Թեև համընդհանուր կրթության իրավունքը վեճազործելու ՄԱԿ-ի 3ազարմայնիկ նպատակը դեռևս հեռու է իրականություն լինելուց, մեզ սպիտակ է տարրական կրթության ոլորտում վերջին տարիների ընթացքում կատարված չնչին, բայց նշանակալի առաջընթացը:



Տեղական և համաշխարհային մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ է երաշխավորել և խթանել երիտասարդների ու մեծահասակների, կանանց և տղամարդկանց սովորելու իրավունքը և կիրառելու ստեղծարար ու արդյունավետ քաղաքացիության բազում հնունությունները: Մտահոգիչ է այն փաստը, որ շուրջ 750 միլիոն չափահասներ (որոնց մեծամասնությունը կանայք են) անգրագետ են: Մենք դատապարտում ենք նաև աշխարհի կառավարիչների և միջազգային գործակալությունների կողմից 3ազարմայնիկ զարգացման երկրորդ և երրորդ նպատակների ակնհայտ անտեսումը:

Համոզված ենք, որ համակողմանի ուսումնառությունը ողջ կյանքի ընթացքում պետք է լինի ոչ թե 3ազարմայնիկ զարգացման նպատակների արդյունք, այլ դրանց հասնելու անհրաժեշտ նախապայման:  
Մեծահասակների կրթության միջազգային խորհուրդը կոչ է անում բոլոր կառավարություններին և միջազգային համագործակցության գործակալություններին՝ կոնկրետ գործողություններ ձեռնարկել, վերականգնել և հաստատել երեխաների կրթության առաջնահերթությունը և արձատյան վերանայել ու վերափոխել մեծահասակների կրթությանը չմիջամտելու ներկա քաղաքականությունը:  
Ազգային բանալին մարդկանց արժանապատվությունը, նախաձեռնությունը ու գործողություններն են: Դեռևս քաղաք կրթությունը կա և մշտապես պետք է լինի բացարձակ առաջնահերթություն:

### Ընդդեմ մարդավաճառության

Ամբողջ աշխարհում տարածված չարիք է մարդավաճառությունը, որ հաճախ դասվում է կազմակերպված հանցագործությունների շարքին և ստրկության ժամանակակից դրսևորումներից է: Ըստ Աշխատանքի միջազգային կազմակերպության՝ ամբողջ աշխարհում տարեկան 2.45 միլիոն մարդ մարդավաճառության զոհ է դառնում: Այս անօրինությունը շարժաբեկություն առումով 3-րդն է թմրանյութերի և զենքի վաճառքից հետո:  
2008 թ. փետրվարի 1-ին ուժի մեջ մտավ Եվրոպայի խորհրդի Մարդավաճառության դեմ պայքարի համաձայնագիրը, որը նպատակ ունի պաշտպանել մարդավաճառության գոհերի իրավունքները, ինչպես նաև հանցագործների և պատասխանատուների կանչել: Այն վերաբերում է

### Ի պաշտպանություն ազգային փոքրամասնությունների

Եվրոպայի խորհրդի Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային համաձայնագրի 10-րդ տարեդարձի կապակցությամբ Սլովակիայի Հանրապետության արտաքին գործերի նախարար և Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի նախագահող ժան Կուբիշկը Գշել է, որ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց իրավունքների պաշտպանությունը Եվրոպայի խորհրդի գործունեության առանցքային ուղղություններից է: Այնուամենայնիվ, որ համաձայնագրում ամրագրված իրավունքները նպաստում են եվրոպական ժողովրդավարական պետությունների միջև համագործակցության ամրապնդմանը: Նա նաև Գշել է, որ համաձայնագրի մասնակից երկրներում արձանագրվել են եսկան առաջընթացներ, որոնք վկայում են ազգային փոքրամասնությունների պաշտպանության համաձայնագրում իրավունքների օրինական երաշխիքների ամրապնդման համար Շրջանակային համաձայնագրի կարևոր դերի մասին:



Համաձայնագրի նպատակն է երաշխավորել, որ այն ստորագրած երկրները հարգեն փոքրամասնությունների իրավունքները պարտավորվելով պայքարել խտրականության դեմ, խթանել իրավահավասարությունը, պահպանել և զարգացնել ազգային փոքրամասնությունների ազգային դիմագիծն ու մշակույթը, ապահովել լրատվամիջոցների և կրթության մատչելիություն և խրախուսել նրանց մասնակցությունը հասարակական կյանքին: Մինչ այժմ Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային համաձայնագիրը, որը փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համար ընդունված առաջին ամփոփ իրավական փաստաթուղթն է, վավերացվել է եվրոպական 39 պետությունների կողմից և ստորագրվել 43-ի կողմից:

մարդավաճառության բոլոր տեսակի դրսևորումների: Համաձայնագիրը երաշխավորում է գոհերին անօրինական գործողություններում ընդգրկված լինելու համար պատասխանատվության ենթարկվելուց, ինչպես նաև ենթադրում է նոր անկախ վերահսկող մարմնի ստեղծում:

### ՇՐԻ ԼՆԿԿԱ

### Մարդու իրավունքների կրթություն կույր երեխաների համար

Կոլմբոյի համալսարանի Մարդու իրավունքների ուսուցման կենտրոնը Շրի Լանկայում առաջին անգամ թարգմանել է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը բրայլյան լեզվով:  
Կազմակերպությունն ունի Մարդու իրավունքների և խաղաղության գիտությունների վկայական, ինչպես նաև մարդու իրավունքների ոլորտում համայնքի տարբեր հատվածների վերապատրաստման հարուստ փորձ:

### Լոյր օրենսդրություն ՈԿԿ-ների վերաբերյալ

Հորդանանի թագավորությունը մերժել է ոչ կառավարական կազմակերպությունների (ՈԿԿ) վերաբերյալ օրենքի նախագիծը, որը նախատեսում էր անհիմն սահմանափակումներ Հորդանանի թագավորության քաղաքացիների համար: Այդ փաստաթղթի որոշ հոդվածներ հակասում էին Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային համաձայնագրերին, հատկապես Քաղաքացիական և քաղաքական իրավունքների վերաբերյալ միջազգային դաշնագրի 22-րդ հոդվածին:

Մարդու իրավունքների ակտիվիստների արաբական ծրագիր

### Համընդհանուր կրթությունը Մարդու իրավունքների տեսանկյունից

Վերջերս ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի հարցերով կազմակերպության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի համագործակցությամբ արդյունքում քրիստոնյաների և երեխաների կրթության իրավունքի և ընդհանրապես կրթության ոլորտին առնչվող իրավունքների վերաբերյալ ձեռնարկ "A Human Rights-based approach to Education for all": Չեռնարկում ներկայացված է կրթության ոլորտը մարդու իրավունքների տեսանկյունից՝ երեխայի կրթության իրավունքներին առնչվող հարցերի արձարծմանը:

"HREA" Մարդու իրավունքների կրթության ընկերակցություն

# Մենք՝ քաղաքացիական Հանրահավաքներ



ԳԵՂԱՐՔՈՒՆԵՐԻ ՄԱՐԶԻ  
ԱՌԵԼՅՐԱՄԱՐՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ  
ՊԱԼԱՏ

# ՉԱՐԳԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Գ Ա Ա Պ

Հիմնադրվել է 2002 թվականին:  
Գրանցվել է 2002 թ. ապրիլի 2-ին:  
Առաքելությունն է՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում բիզնես-համայնքի կայացումը, հզորացումը և զարգացումը կայուն տեմպերի ապահովումը:  
Նախագահն է Վարդգես Կարապետյանը:

Կազմակերպության անդամակցում է 202 մարդ:

Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Բուռնպլան 2  
Հեռախոսահամարներ (264) 2-24-66  
Հեռ.՝ (264) 2-24-66  
Էլ. փոստ՝ info@gccci.am



2001 թ. հոկտեմբերից Հայաստանում գործարար համայնքների կայացման ուղղված որոշակի իրադարձություններ են տեղի ունենում: Այդ ուղղությամբ կատարվող քայլերի նպատակն էր՝ միավորել գործարարներին մի գաղափարի շուրջ, ստեղծել մի կարգ, որի հիման վրա հնարավոր կլիներ գործարար աշխարհի ներկայացուցիչների համագործակցությունը:

2001 թվականի հոկտեմբերի 24-ին ՀՀ Ազգային ժողովը ընդունեց «Առևտրաարդյունաբերական պալատների մասին» ՀՀ օրենքը: Այն նպատակ էր հետապնդում կարգավորել գործարարության ընդհանրական և հեռանկարային շահերի ներկայացման գործընթացը՝ նպատելով հզորացրել բիզնես-համայնքի կայացմանը:

2002 թ. ապրիլին Գեղարքունիքի մարզում հիմնվեց ՀՀ Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատը (ԳԱԱՊ): Այն ոչ առևտրային կազմակերպություն է, որի առաքելությունն է՝ ՀՀ Գե-

ղարքունիքի մարզում բիզնես-համայնքի կայացումը, հզորացումը և զարգացման կայուն տեմպերի ապահովումը: ԳԱԱՊ-ի առաքելության բաղկացուցիչ է նաև բիզնես-սփի էական հիմնախնդիրների լուծման և համաչափ զարգացումն ապահովելու համար համապատասխան ծառայությունների մատուցումը:

Պալատը արդեն 6-րդ տարին է, ինչ գործունեություն է ծավալում Գեղարքունիքի մարզում: Կազմակերպությունն ունի 202 անդամ: Պալատին կարող է անդամակցել մարզի տարածքում պետական գրանցում ստացած յուրաքանչյուր իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր՝ զբաղվող դիմումի հիման վրա: Պալատն իր շահառուներին կրկնակի, խորհրդատվական, շահերի պաշտպանության ծառայություններ է մատուցում: Պալատի հիմնական շահառուները մարզում գործող ձեռնարկություններն են:

Պալատի կառավարման բարձրագույն մարմինը համագումարն է, որը գումարվում է 5 տարին մեկ: Պալատի գործադիր մարմինը պալատի տնօրինությունն է, որը գլխավորում է գործադիր տնօրենը: Կազմակերպական կառուցվածքում առանձնացված են հետևյալ բաժինները՝ «Սկսնակ գործարարության օգնական», «Բիզնեսի միջավայրի բարելավում», «Գործարարության ներկայացում արտերկրում», «Ուսուցողական ծրագրեր և խորհրդատվություն», «Պալատի մարզեցում» և «Հանրային հարաբերություններ», «Ընդհանուր գործառնություններ», որոնց իրականացումն են առաջարկվող համապատասխան ծառայությունները:

Պալատն իր առաքելության ոլորտում քաղաքականության վերլուծության և օրենքներում փոփոխություններ նախաձեռնելու փորձ ունի: Այդ մասին են վկայում կազմակերպության կողմից 2005 թ. իրականացված գործարար միջավայրի ուսումնասիրությունները և մրցունակության վերլուծությունը շուրջ 300 ձեռնարկություններում, որոնց հիման վրա Հայաստանում գործող 8 օրենքներում 26 փոփոխություններ են առաջարկվել: Առաջարկված փոփոխություններից վեցն ընդունվել են: ԳԱԱՊ-ը հրատարակում է «Հարուստ

և սկսնակ» տեղեկատվական վերլուծական հանդեսը, որի առաքելությունը մարզերի տնտեսական կյանքի լուսաբանումն է, հիմնախնդիրների վերլուծությունը և դրանց պատճառների մեկնաբանումը:

Ներկայումս ԳԱԱՊ-ը մատուցում է հետևյալ ծառայությունները՝ Սկսնակ գործարարության աջակցություն:

– «Հաջող սկիզբ» ծրագրի աջակցություն մարզի տարածքում հիմնվել են ավելի քան 45 նոր ձեռնարկություններ՝ ստեղծելով ավելի քան 100 աշխատատեղեր:

– Սկսնակ գործարարության աջակցության հիմնադրամ. ֆինանսավորվել են «Հաջող սկիզբ» ծրագրի 30 անսկսնակներ: Գործարարության միջավայրի բարելավում:

– Տեղական տնտեսական զարգացման ծրագրեր. PACA ծրագիրն իրականացվել է մարզի Գավառ և Սևան համայնքներում՝ վեր հանելով համայնքի մրցակցային առավելությունները և առաջարկելով նոր գործարար գաղափարներ:

– «Հարուստ հող» ամսաթերթի հրատարակում՝ ներառելով գործարարությանը հուզող հիմնահարցերի պարզաբանումն ու հնարավոր լուծումների առաջարկումը:

– Հարկային դատարանի փոփոխությունների լրբեցնելը:

– Ուղղակի աջակցություն ծրագրերի կազմման խորհրդատվություն. շուկայի հետազոտությունների միջև որոշակի գործողությունների պլանավորում բիզնես-կենտրոնների համար:

Գործարարության զարգացման ծրագրեր:

– Գործարարության վիճակի ակտիվություն, խնդրահարույց հատվածների վերլուծում և ներկայացում:

– Գործարար հիմնախնդիրների լուծումների առաջարկում:

– Գործարար ծրագրերի կազմում:

– Գործարար խորհրդատվություն:

– Դասընթացներ գործարարների և մասնագետների համար մարկետինգի, արտադրության պլանավորման, ֆինանսների պլանավորման և մեքենայի գծով:

– Այլաբանների շուկայական հետազո-

տություններ, հարցումներ և վերլուծություններ:

– Համացանցային կայքերի կազմում:

– Որակի կառավարման համակարգերի ներդրում:

Գործարարները դիմում են մեզ, եթե.

– Արտադրանքի իրացման ծավալները նվազում են:

– Որակյալ աշխատակիցները հեռանում են:

– ժամանակի զգալի մասը ծախսվում է անօգուտ գործողությունների վրա:

– Արտադրանքի որակը ոչ միշտ է միանման բարձր:

– Հաճախորդները բողոքում են սպասարկման որակից:

– Կանխիկ գումարը չի վարարում կառուցվող գնումների համար:

– Դժվարանում են ընտրել սպասարկող բանկ:

– Հաճախակի վճարում են տուգանքներ տարբեր իրավախախտումների համար:



– Որոշել են ձեռնարկել նոր գործ:

– Որոշել են սարքավորումներ ձեռք բերել այլ երկրներից:

– Որոշել են արտադրանքն իրացնել արտասահմանում:

Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատի փնձ համաձայն է, որ տարածքային զարգացման հիմքում համայնքների տնտեսական զարգացումն է: Սա է պատճառը, որ մեր գործունեությունն ուղղված է մի կողմից որոշակի ձեռնարկությունների աջակցությանը, մյուս կողմից՝ գործարար միջավայրի բարելավմանը:

ՍՐՈՒՆԵ ԲՎՊՈՒՅԱՆ  
ԳԱԱՊ փորձագետ

**2007 թ. ընթացքում աշխարհում 86 լրագրողներ և 20 ՉԼՄ աշխատակիցներ են սպանվել, 887-ը՝ ձերբակալվել են, 1.511-ը՝ ֆիզիկական հարձակումների և սպառնալիքների են ենթարկվել, 67-ը՝ ստնակովել են, 528 ՉԼՄ թողարկումներ գրաքննության են ենթարկվել:**

2007 թ. սպանվել են 86 լրագրողներ, որոնցից 47-ը՝ Իրաքում: Չինված խոշոր թիրախ են դարձել օտարերկրյա ՉԼՄ-ների և օտարերկրացիների կողմից ֆինանսավորվող հաստատությունների գործակցող լրագրողները: Դեպքերի ամբողջությամբ կառավարության կողմից համապատասխան միջոցների ձեռնարկումը սահմանափակվել է լրագրողներին ինքնապաշտպանության նպատակով զենք կրելու օրոշով: Պալատը շնորհիվ է: Եվ ութ լրագրողներ սպանվել են Սոմալիում, վեցը՝ Պակիստանում, երեքը՝ Շրի Լանկայում և երկուսը՝ Երիթրեայում:  
2007 թ. ընթացքում սպանվել են նաև 20

## Մամուլի ազատության սահմանափակումների վիճակագրություն

ՉԼՄ այլ աշխատակիցներ՝ վարորդներ, բարգամիչներ, տեխնիկական աշխատողներ, անվտանգության ծառայողներ:

Լրագրողների սպանությունների մոտ 90%-ը ամբողջովին կամ մասամբ անպատիվ է մնում: Կատարությունները հաճախ ժամանակ են շահում՝ հույսը դնելով հանրության մարդկային շնորհի վրա: «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպությունը տարեցտարի պայքարում է նման անպատեխիության դեմ: «2008 թ. կանցկացվեն երկու կարևոր դատավարություններ՝ Թուրքիայում՝ Հրատ Գինքի և Ռուսաստանում՝ Աննա Պոլիտովկայայի սպանությունների գործով: Եվրոպայի սահմաններում կատարված երկու սպանությունների գործով դատավարությունները պետք է անցկացվեն օրինակելի ձևով, հանցագործության և կատարողները, և

պատվիրատուները պետք է խստորեն պատժվեն»,- հայտարարել է «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպությունը:

Հայ-թուրքական «Ազոս» ամսագրի խմբագիր Հրաման Գինքն սպանվել է 2007 թ. հունվարի 19-ին Սուսսոլում: Մարդասպաններն ըստ երևույթի թուրք ազգայնամուտներ են, և կասկածյալ վարձու մարդասպանների դատավարությունը, որ վերսկսվել է 2008 թ. փետրվարին, ամենայն հավանականությամբ կբացահայտի հանցագործության բոլոր պատասխանատուներին՝ իրան հանելով նրանց հնարավոր կապերն անվտանգության ուժերի հետ:

2008 թ. հունվարի 1-ին աշխարհում 135 լրագրողներ են ազատագրվել, այս ցուցանիշը գրեթե անփոփոխ է մնացել տարիներ շարունակ: Ազատված լրագրողներն

ամբիջապես փոխարինվել են նոր լրագրող-կալանավորներով: Սակայն ազատագրվումը լրագրողների խոսքի ազատությունը սահմանափակելու միակ միջոցն է: 2007 թ. 15 երկրներում ամբկազմ 67 ՉԼՄ աշխատակիցներ են առևանգվել:

Խնդիրն առկա է նաև համացանցային լրագրության ոլորտում. ավելի քան 2600 կայքեր են փակվել, որոնց մեծ մասն առցանց քննարկման ֆորումներ են: Այս ոլորտում ամենախիստ զրաքննությունը Հինգստանում է իրականացվում, որտեղ կոմունիստական կուսակցության 17-րդ համագումարից առաջ և ընթացքում փակվել են 2500 կայքեր և ֆորումներ:

«Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպության մամուլ հաղորդագրություն

### ԵՎՐՈՊԱՅՑԻ ԽՈՐՀՐԴԻ ԽՈՇՏԱՆՊՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԱԿՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՅՑ ԿԱՑԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Եվրոպայի խորհրդի խոշտանգումների կանխարգելման հանձնաժողովը (ԽԿԳ) զեկույց է հրատարակել 2008 թ. ապրիլին Չայաստան կատարած իր երկրորդ պարբերական այցի արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև Չայաստանի իշխանությունների արձագանքն այդ առնչությամբ: Եվրոպայի խորհրդի պարբերական զեկույցները հրատարակվել են 33 կառավարության խնդրանքով:

Ըստ ԽԿԳ-ի գնահատման Չայաստանում կալանավորների նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կողմից բիրտ վերաբերմունքի դրսևորման վտանգ

կա. նման դեպքեր են գրանցվել Նուբարաշենի ցմախ դատապարտվածների շրջանում, ինչպես նաև Գորիսի և Արևիանի կալանավայրերում: Վանաձորի կալանավայրում բիրտ վերաբերմունքի դրսևորումներ չեն արձանագրվել:

ԽԿԳ-ն խրախուսել է 33 կառավարության կողմից այս ոլորտի բարելավման ուղղությամբ ձեռնարկվող միջոցները, այդ թվում՝ կալանավորների բնակիչների բլիզզայի նվազեցումը ու վերանորոգումը (յանաձորի օրագրերը, սակայն մտահոգություն է հայտնել կալանավորներին, այդ

թվում ցմախ ազատարկվածներին նպատակալար (խարժեք զբաղվածությամբ չապահովելու առնչությամբ: Ինչ վերաբերում է կալանավորների առողջապահական պայմաններին, ապա 2002 թ. արդյունքների համեմատ որոշակի առաջընթաց է նկատվել՝ հատկապես պալարախտի հայտնաբերման և բուժման առումով:

Սևանի հոգեբուժարանում պատվիրակության կողմից հարցված հիվանդների մեծ մասը դրական է արտահայտվել բժշկական անձնակազմի մասին, սակայն մտահոգության տեղիք են տվել հիվանդները

րի ընդհանուր ճնշող մեջաբանները:

Չայաստանի իշխանություններն արձագանքել են ԽԿԳ-ի կողմից դարձրակված հարցերին տեղեկացնելով բարձրակարգ հարմար մոդուլային թաղամասերի մասին կալանավորների նկատմամբ բիրտ վերաբերմունքի դրսևորման դեմ իրավական երաշխիքների ապահովում, համակարգի կալանավորների բարեփոխումներ, ինչպես նաև կալանավորների ընդարձակում և արդիականացում: Ինչ վերաբերում է Սևանի հոգեբուժարանի հաստատությանը, ապա դրա շենքի վերանորոգման աշխատանքները և հաստատությունում թերապևտիկ ու վերականգնողական ծառայությունների կազմակերպման գործողություններն ընթացքի մեջ են:

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՄԱՏՁԵԼԻ ԼԻՆԻ

### Հարցադրում և առաջարկում է հասարակական կապակերպությունը

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի համաձայն՝ պետական կառավարման մարմինները և տեղական կառավարման մարմինները (ՏԽՍ) պարտավոր են ընդունված իրավական ակտերի, ինչպես նաև ՀՀ կառավարության որոշումների մասին տեղեկացնել շահագրգիռ իրավաբանական և ֆինանսական անձանց:

Համաձայն ՀՀ կառավարության «Հասարակությանն իրավական ակտերի մասին իրազեկման» 11 հունիսի 2002 թ. N 1146-Լ կարգի 2-րդ կետի՝ «Իրավական ակտը կիրառող մարմինների կողմից իրազեկումն իրականացվում է պաշտոնական հաղորդագրության, զանգվածային լրատվության միջոցների հետ ստույգիմբեր և հանդիպումներ կազմակերպելու, հարցազրույցների տեսլու, հանդիպումներ կամ տեղեկյալ հրապարակելու կամ հեռուստատեսության մեջ ռադիոյով ելույթներ ունենալու միջոցով»:

Նշված միջոցները չեն կարող ապահովել անբողջական, հասկանալի, մատչելի և հավաստի տեղեկատվություն: Պաշտոնական հաղորդագրությունը (պաշտոնական տեղեկագրեր) իրավաբանական այնպիսի գրականություն է, որից օգտվելու համար անհրաժեշտ են իրավաբանական հատուկ գիտելիքներ, որոնց բացակայության դեպքում գրականության անկախությունը անգամ չի վերաճում հասարակության իրազեկության մատչելիության խնդիրը: Մինչդեռ մարզերում առկա է թե գրականության և թե առավելապես բավարար գիտելիքներ ունեցող մասնագետների անհրաժեշտություն: Այլեի՞ն՝ անգամ իրավաբանները հաճախ խնդրվում են ունենում օրենքների և իրավական ակտերի տարբերակման առումով, և հաճախ օրենքը մշակող և կիրառող կառույցի կողմից համապատասխան մեկնաբանության տրամադրման խնդիր է առաջանում:

Լրատվամիջոցներով տեղեկատվության տարածումը ևս չի լուծում հանրային իրազեկվածության խնդիրը, քանի որ կարգի 2-րդ կետով սահմանված՝ անվտանգության, հանդիպումների ու հարցազրույցների միջոցով տրամադրվող տեղեկատվությունը ընդամենը օրվաօրային բնույթ կրում, ինչը չի կարող ապահովել տեղեկագրածության լիարժեք, հասկանալի և հավաստի ներկայացման մակարդակ, որը պահանջվում է տեղեկատվության նպատակային և արդյունավետ կիրառման համար:

2006 թ. ԱՅԻԾ վերանայման 27 ոլորտներում մարզային հանրային ընթացումների ընթացքում մարզերում առկա սոցիալական լուրջ խնդիրների կողքին հանրության կողմից բարձրացվել է նաև իրավական տեղեկացվածության խնդիրը, որն, ըստ

հարցադրողների, իրենց իրավական անպաշտպանության և կոռուպցիոն ռիսկերի պատճառ է:

2007 թ. մայիսից «Քառյուցիկաբար ինքնընթացի» Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագրի ԱՄՆ ՄԶԳ Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամի աջակցությամբ կազմակերպության կողմից Արագածոտնի մարզում իրականացվում է «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, կիրառման կարգերի մասին տեղեկատվության տարածումն արագետարամի և ՓՄՁ ՁԱԿ-ի միջոցով կազմակերպելու ծրագիր: Ծրագրի շրջանակներում մարզում իրականացվել են օրենքի, նրա կիրառման կարգերի և սոցիալական գործընկերության հիմնությունների ուսուցումն թրեյնինգներ, որոնց ընթացքում հարցված 72 մասնակիցներից (գյուղապետեր, ձեռնարկատերեր և 34 անդամներ) միայն գյուղապետերն էին տեղայն օրենքով սահմանված աջակցության պետական ծրագրի, այն էլ՝ միայն մեկին:

Վճարովի հասարակական շահատանցների ծրագրին: Շանթո լինելով օրենքով սահմանված նշված ծրագրին, որի իրականացումը կողմերից և, գյուղապետերից ոչ բոլորն էին տեղայն կարգի կատարված փոփոխությունների մասին, ընդ որում՝ բոլոր իրազեկվածները տեղեկացվել էին կամ գործընկերների միջոցով, կամ գործակալություն անձնակազմի միջոցով, կամ գործակալության աշխատակիցների կողմից տեղում կազմակերպված հանդիպումների ընթացքում, տեղեկյալի բանավոր փոխանակման միջոցով:

Տեղեկատվությունը օրենքը կիրառող կողմերին՝ տեղական ինքնակառավարման մարմիններին (գյուղապետերի և ՓՄՁ սուբյեկտներին մարզպետարանների և ՓՄՁ ՁԱԿ-ի միջոցով փոխանցելու և միաժամանակ վեբընկերիս որոշակի խորհրդատվությամբ ապահովելու՝ մարզում փորձարկված մեխանիզմի արդյունավետության գնահատման համար մարզում իրականացվեց հանրային ընթացքում մասնակիցներն, արդյունավետ գնահատելով կիրառված մեխանիզմը, միաժամանակ հարց բարձրացրին՝ անդրադառնալու բոլոր օրենքների առնչությամբ տեղեկյալի տարածման կարգի բարելավման խնդիրներին: Առաջարկվեց փոփոխություն մտցնել «Հասարակությանն իրավական ակտերի մասին իրազեկման» կարգում՝ հաստատված մեխանիզմը միջգերատեսչական տեղեկյալի տարածման սկզբունքները, դրանք ժամկետները և պատասխանատուներին:

Հունիս ամսվա ընթացքում կազմակերպությունը իրականացրել է նաև «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության Հարցադրումների ուսումնասիրության հարցում էլեկտրոնային փոստով: Հարցաշարը հղվել է 270 ՀՀ-ների, գործատուների, որոնցից արձագանքել են միայն 70-ը: Հարցումն արդյունքում պարզվել է, որ հարցվողներից միայն 10-ն են տեղայն իրենց հետաքրքրող օրենքներին և իրավական ակտերին, այն էլ՝ պաշտոնական տեղեկագրերից, էլեկտրոնային կայքերից, լրատվամիջոցներից և գործընկերներից: Մնացած 60-ը ոչ միայն տեղայն չեն, այլև նույնիսկ պատկերացում չունեն, թե որտեղից և ինչպես կարող են տեղեկանալ: Հարկ է նշել, որ հարցված բոլոր սուբյեկտները համոզյալ կյանքում ակտիվ իրավաբանական կամ ֆինանսական անձինք են: Ինչ վերաբերում է մարզային իրազեկ տեղեկատվությանը, դրանք միայն իրավապաշտպան կամ շահերի պաշտպանության զբաղվող ՀՀ-ներն են, որոնք տիրապետում են տեղեկատվական աղբյուրներից օգտվելու անհրաժեշտ հիմնություններին, ինչպես նաև գործի բերումով մշտապես օգտվում են իրավական տեղեկատվական աղբյուրներին հմուտ իրավաբանների կամ այլ մասնագետների միջոցով:

Ընդհանուր (թրեյնինգների և էլեկտրոնային փոստով) 140 հարցվողներից 95-ը գտնվում են, որ տեղեկատվությունը թե կիրառվեցին և թե հանրությանը պետք է տրամադրվի անմիջապես համապատասխան պետական կառույցի կողմից: Այլեի՞ն՝ դրանք պետք է նրա կողմից հրատարակվել պարզ մեկնաբանություններով, հարց ու պատասխաններով և բաշխվեն համապատասխան հաստատություններին կառույցների, տեղեկատվական ռեսուրս կենտրոնների, ՀՀ-ների և մարզային հասարակական կապի այլ ռեսուրս կենտրոնների միջոցով:

Համաձայն Չայաստան-հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի (DFID) կողմից հրատարակված ԱՅԻԾ մասնակցային գործընթացի ուղեցույց ձեռնարկի (թողարկում 2)՝ տեղեկատվության տրամադրումն ու մատչելիությունը դիտվում են որպես այն ստացողի (կառույցի կամ քաղաքացու) իրավունք և պետք է տրամադրվեն օրենքով սահմանված ժամկետներում: Տեղեկատվությունը պետք է լինի հնարավորինս ստորոգյալ, հասկանալի, մատչելի և հավաստի: Դրանք պետք է լինեն ձեռնարկների, տեղեկատվության, ուղեցույցների, գրքիկների, տեղեկատվական թերթիկների, պատասխանների, շարժանկարների, աուդիոմագրությունների և խաղերի, փոստային առաքումների, սոցիալական գրազեկների տեսքով:

Ներկայումս տեղեկատվության տրամադրումը հիմնականում ապահովվում է միայն պաշտոնական տեղեկագրերի սահմանափակ քանակի հրատարակմամբ, ինչպես նաև մամուլի ստույգների, հանդիպումների ու հարցազրույցների միջոցով՝ նույնպես քաղաքացիական սահմանափակ, ինչը պայմանավորված է սահմանափակ ֆինանսական միջոցների առկայությամբ:

Ուստի առաջարկվում է քլուցելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսել ակտիվ ընդգրկում նախաձեռնությունների իրականացման համար, զգույն և կիրառել համապատասխան գերատեսչական կառույցների, առկա տեղեկատվական ռեսուրս կենտրոնների միջոցով տեղեկատվության տարածման առավել արդյունավետ մեխանիզմներ:

Նշված հարցերի լուծման համար գործող կարգը չի ապահովում բավարար երաշխիքներ:

Ուստի խնդրի լուծման համար վերոհիշյալ «ՀԱՄԱՐԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՎԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԻՐԱԿԱՆԱԳՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 11 հունիսի 2002 թ. N 1146-Լ որոշման մեջ

ԱՌՄԱՐԿՈՒՄ ենք կատարել հետևյալ լրացումները.

1) Իրավական ակտերը կիրառող մարմինների կողմից սեփական կառույցի ստորաբաժանումներին, գործընկեր պետական կառավարման մարմիններին և տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրել անհրաժեշտ իրավական ակտերի մեկնաբանություններով թեմատիկ ձեռնարկներ, տեղեկատվություն, ուղեցույցներ, գրքիկներ:

2) Կազմակերպել ոլորտը կանոնակարգող անհրաժեշտ իրավական ակտերի մեկնաբանություններով թեմատիկ ձեռնարկների, տեղեկատվության, ուղեցույցների, գրքիկների մշակում և տարածում համապատասխան պետական և ոչ պետական հաստատությունների, տեղեկատվական կենտրոնների միջոցով:

3) Կազմակերպել իրավական ակտերը մատչելի լեզվով լուսաբանող տեղեկատվությունների, պատասխանների, ֆիլմերի, աուդիոմագրությունների և խաղերի, փոստային առաքումների, սոցիալական գրազեկների մշակում և տարածում բնակչության շրջանում:

4) Իրավական ակտերը կիրառող մարմիններին կողմից համապատասխան գերատեսչությունների և տեղեկատվական կենտրոնների միջոցով տեղեկատվական հոսքերի կանոնակարգումը սահմանող իրավական փաստաթղթի ընդունում:

Առաջարկված միջոցառումների ապահովման համար անհրաժեշտ է.

- 1. սահմանել ֆինանսավորման համապատասխան կարգը,
- 2. համապատասխան մարմիններում նշանակել պատասխանատու անձինք:

ԹԱՄԱՐԱ ՄԵՐԱՎԱՅԱՆ  
«Արագ» ՀԳԿ-ի նախագահ  
ՌԻՍՍ ՏԵՐ-ՄԻՆԱՅԱՆ  
Իրավաբան-փորձագետ

(Սկզբը՝ նախորդ համարում)

ԱՐԱՅԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ  
ՀՄԻԿ Կորնթոսյան բաժնի վարիչ

Հերմինե Բաբուշյան – Պարոն Պապիկյան, խնդրում եմ հակիրճ ներկայացնել դասընթացի կազմակերպչական և բովանդակային կողմերը:



Արայիկ Պապիկյան

Արայիկ Պապիկյան – դպրոցում դասավանդող մասնագետներն այս դասընթացի կարիքն ունեն, որովհետև առարկան դպրոցում դասավանդում են՝ առանց մասնավարժական բուհում որպես մասնագետ պատրաստվելու: Ծրագիրը «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն», «Պետություն և իրավունք» առարկաների մասնագետներն ոչ միայն տեսական, այլև մեթոդական բարելավմանն է ուղղված: Մեկամյա ուսուցում է, որն ավարտում են յուրաքանչյուրի համար անհատական պլանով կազմակերպվող ծրագիրն ավարտելուց հետո:

Դասընթացն ունի երկու բաղկացուցիչ մաս՝ առկա ուսուցում և հեռակա ուսուցում: Առկա առաջին բաժնուրյա հավաքն է. ամսանը և հավանաբար մյուս տարի ծն-



նանը ևս երկու հավաք կլինի: Մյուս ժամանակահատվածում աշխատում ենք հեռակա. յուրաքանչյուր անհատական ուսումնական պլանով ստանում է հանձնարարությունների փաթեթ, գրավոր աշխատանքը ներկայացնում կրթության բաժին, որից հետո ստանում է հերթական փաթեթը: Ընթացիկ ստուգաքննություններից վերջում հանձնում ենք քննություն երեք առարկաներից և ուսուցման մեթոդաբանությունից:

Հ. Բ. – Արդեն տասներկու տարի է, ինչ ՀՄԻԿ-ի կողմից կազմակերպվում են դասընթացները: Ի՞նչ փոփոխություններ են կատարվել այս ընթացքում:

Ա. Պ. – Դասընթացի մեխանիզմները, կազմակերպման ձևը էականորեն չեն փոխվել: Փոփոխությունը հիմնականում բովանդակային է, որովհետև «Պետություն և իրավունք» թեմաները մշտապես վերափոխության կարիք ունեն: Վերջին երեք-չորս տարիների ընթացքում կազմակերպման ձևի մեջ փոփոխություն չի եղել,

չնայած դրա կարիքն զգում ենք: Հնարավոր է, որ արդեն հաջորդ դասընթացը կկազմակերպվի որոշակի փոփոխություններով՝ կազմակերպչական և բովանդակային առումներով:

Անհրաժեշտ է արմատական փոփոխություններ կատարել կրթության կազմակերպման մեթոդների հարցում՝ յուրաքանչյուրի նկատմամբ անհատական մոտեցում ապահովելով: Սրանք յուրք հիմնահարցեր են, խնդիրներ, որոնք մի դպրոցի կամ դասարանի շրջանակներում լուծելը շատ դժվար կլինի: Դա ամբողջ համակարգի առջև ծառայած խնդիր է: Ընդ որում՝ դա իրատեսական է, դրա հիմքերն ունենք: Կառավարություն կողմից սահմանված կրթակարգն այդ հնարավորությունը տալիս է, պարզապես պետք է անցնել ուսուցման նոր ձևի՝ ընդհանուր ճակատից՝ ուսուցման կազմակերպման անհատական եղանակին:

Հ. Բ. – Այս մեթոդաբանական համակարգի ներդրումը հանրակրթական ոլորտում որքանո՞վ է իրատեսական մոտ ապագայում:

Ա. Պ. – 3-4 տարվա ընթացքում որոշ տարրեր հնարավոր է ներմուծել դպրոց, իսկ ամբողջական կիրառման համար անվճար մեկ տասնամյակ պետք է:

Հ. Բ. – Ի՞նչ թերություններ, բացթողումներ կարող է չտևել կրթական նոր համակարգը:

Ա. Պ. – Այն կարգախոսը, որ յուրաքանչյուր երեխա կարող է սովորել գերազանց, յուրացնել մատուցվող նյութը, այդ մեթոդի դեպքում իրատեսական է: Եթե երեխան ունակ է լսելու, ընկալելու, ունակ է նաև գերազանց սովորելու և յուրացնելու նյութը: Իսկ դաս-դասարանային համակարգում այդ հնարավորությունը երեխան չի ստանում: Այսինքն՝ մեկ դասաժամի սահմաններում նյութը չյուրացնելով՝ հաջորդ դասաժամերին նա պետք է անցնի նոր դասը՝ հիմն ամբողջությամբ չյուրացրած: Եվ այդպես մի քանի չյուրացրած դասերից հետո նա չի կարող համարվել լավ սովորող երեխա, միջին դպրոցում կլինի միջակություն, իսկ ավագ դպրոցում ուսուցիչների «մեծահույս» շնորհիվ կավարտի դպրոցը:

Այս մեթոդում մոտեցումն անհատական է: Յուրաքանչյուր սովորող նյութը ավարտում է այն յուրացնելուց հետո: Մենք հաջողությամբ դրանով աշխատում ենք ուսուցիչների հետ:

ՎԱՐԴԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Մյունիքի մարզի Կոռնիձոր գյուղի դպրոցի ուսուցիչ  
ՄԻՅԻ դասընթացի մասնակից



Հ. Բ. – Չեզ ի՞նչ տվեց Մարդու իրավունքների հայկական դպրոցի դասընթացը:

Վարդան Կարապետյան – Դասընթացն ապահովում է տարբեր մարզերի դպրոցների «Իրավունքի» ուսուցիչների միջև փոխադարձ շփումներ, հաղորդակցություն, փորձի փոխանակում: Քանի որ դասընթացը խորացված է, իրավական գիտե-

լիքներ, ուսուցման նոր մեթոդներ, որոնք արդեն կիեշտացնեն մեր աշխատանքը դպրոցում. դասընթացի ընթացքում սովորած մեթոդների շնորհիվ կարող ենք նպաստել երեխաների իրավական դաստիարակությանը և համակողմանի զարգացմանը:

Հ. Բ. – Համագործակցային ուսուցման մեթոդաբանությունը միայն «Իրավունք» առարկայաշարի ուսուցիչներին է անհրաժեշտ, թե՛ բոլոր առարկաների դասաժամերին էլ կարող է կիրառվել:

Ա. Պ. – Այս մեթոդներն անհրաժեշտ են բոլոր ուսուցիչներին, բոլոր առարկաներին էլ կարող են դասավանդվել այս մեթոդներով՝ երեխայի մոտ բարձրացնելով և ինքնուրույնությունը, և պատասխանատվությունը, և փոխաջակցությունը: Այդպիսով երեխան արդեն հանդիսանում է ոչ միայն սովորող, այլև սովորեցնող:

Հ. Բ. – Ինչպե՞ս էիք պատկերացնում դասընթացը մինչև Վանաձոր գալը և ի՞նչ նախնական տպավորություններ ունեցե՞ք:

Ա. Պ. – Սկզբում, ծիշն առած, բավականին անիրատեսական էր թվում, բայց այս մեթոդներով աշխատելուց հետո զգացիմ, որ դասընթացն արդյունք կտա, որի առաջին նշաններն արդեն երևում են: Փոխադարձ քննարկումները, բանավեճերը, համագործակցությունն իսկապես արդյունք են տալիս: Քսանտոյա դասընթացից հետո յուրաքանչյուր մեր դպրոցում կկիրառենք ստացած հմտությունները:

Հ. Բ. – Կազմակերպչական և բովանդակային առումներով առաջարկություններ ունե՞ք:

Ա. Պ. – Կուզենայի, որ դասընթացները լինեն պարբերական, շարունակելի, դասընթացին մասնակցեն Հայաստանի Հանրապետության բոլոր դպրոցների ուսուցիչները, որպեսզի կարողանանք դպրոցում նպաստել երեխայի համակողմանի զարգացմանը: Երբ բոլոր առարկաներն այս մեթոդներով ուսուցանվեն, բնականաբար, համակողմանի զարգացած սերունդ կծեծանա:

ՆԱՐԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ  
Կոտայքի մարզի Առինջ գյուղի դպրոցի ուսուցչուհի  
ՄԻՅԻ դասընթացի մասնակից

Հ. Բ. – Մինչ այս դասընթացը մասնակցել էք մնամոթիմակ այդ դասընթացի:

Նարինե Ալեքսանյան – Մասնակցել եմ «Պատանեկան նվաճումներ» կազմակերպության դասընթացներին, ապա նույն կազմակերպության նախաձեռնած եռօրյա սեմինարին:

Հ. Բ. – Ի՞նչ առանձնահատկություններ եք տեսնում այս դասընթացում:

Ն. Ա. – Մյուստեղ մենք և մեթոդն ենք սովորում, և՛ դրանով ուսուցանելու ձևերն ու եղանակները, այսինքն՝ մենք նույնպես



սովորում ենք այն մեթոդներով, ինչ մեթոդներով պետք է սովորեցնենք երեխաներին:

ԱՐՄԵՆ ՎԱՐԻՆԵՅԱՆ

Արարատի մարզի Արարատ գյուղի դպրոցի ուսուցիչ  
ՄԻՅԻ դասընթացի մասնակից



Հ. Բ. – Մինչ դասընթացին մասնակցելն ի՞նչ գիտեիք դրա մասին, ի՞նչ է փոխվել այս ընթացքում:

Արմեն Վարինյան – Մինչ դասընթացին մասնակցելն ստույգ կիրառելու պատկերացում ունեցի: Տպակրություններն ՄԻՅԻ դասընթացից միայն դրական են: Դասընթացը շատ բան է տալիս և՛ գիտական առումով, և՛ կարևոր տեղեկություններ համագործակցային ուսուցման մեթոդների վերաբերյալ:



Հ. Բ. – Ի՞նչ առավելություններ ունի այս նախաձեռնությունը:

Ա. Պ. – Առավելությունն այն է, որ գրեթե բոլոր մարզերի դպրոցների կամ գոյն մի մասի ուսուցիչներին հետ տեղի է ունենում փորձի փոխանակություն: Սա դրական իրողություն է, քանի որ սովորում ենք համագործակցել և սովորեցնել համագործակցային ուսուցման մեթոդները:

2008 թվականի հունվարի 29-ին Վանաձորի քաղաքամերձ «Ծիծեռնակ» ճամբարում տեղի ունեցավ Մարդու իրավունքների հայկական դպրոցի (ՄԻՀԻ) 2008 թվականի մեկամյա խորագրով դասընթացի ձեռնարկի շրջանի առաջին հավաքի ավարտական երևույթ:

Երևույթին մասնակցում էին մարզային և տեղական իշխանությունների, համագործակցի կազմակերպությունների և լրատվամիջոցների ներկայացուցիչներ, ովքեր իրենց ուղղույնի և շնորհավորական խոսքերը հղեցին սովորողներին:

ՄՇԱԿՈՒՅԹ

Գ Լ ՈՔ Ա Լ « Ա » Ա Յ Ո Ւ Մ

ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ  
Բանասեր

Բանասեր Լ. և ո՞ն Սարգսյանի սույն հոդվածն անդրադառնում է լեզվական մի հրատապ խնդրի, որ հատկապես վերջին տասնամյակում փորձում է ներխուժել մեր լեզու և անգամ գրականություն իբրև զավիթ՝ սպտանալով լեզվական բազմադարյան հարուստ մշակույթ ունեցող հայերենի անաղարտությանը:

Խմբագրությունը պատրաստ է տպագրել խնդիրն արձարժող նոր հոդվածներ, արձագանքներ:

Օրընթաց մամուլում, գիտական պարբերականներում հայոց լեզվի մաքրությանը, զարգացման միտումներին վերաբերող հրապարակումների պակաս երբևէ չի գագացվել: Արդարև, մենք շատ ուշադիր ենք՝ լեզվի մաքրությունն աղարտող գանձազուստ սխալները հրապարակ բերելու, և ջանադիր՝ մեր գրավոր ու բանավոր խոսքից դրանք բացառելու համար:

Այնուամենայնիվ, մտավախություն կա, թե համրության ուշադրությունը պարբերաբար ստեղծելով լեզվական ինչ-ինչ սխալներ, էական և ոչ էական թերիների վրա, մենք կարծես մի առավել մեծ վտանգի ահագանգը լսելու համար՝ խուլ, այդ վտանգի մասին բարձրաձայնելու համար համր ենք ձևաճում: Խոսքը համընդհանուր՝ գլոբալ «ա»ացման մասին է: Հայ դպրոցականը, ուսանողը, որ հմտացել է և շաղկապից առաջ ծիշտ (ենթակայի փոփոխությամբ պայմանավորված) ստորակետ դնել, որ հրաշալիորեն վարժվել է տարբերել վերաբերել-ն ու վերաբերվել-ը, որ սովորել է գրավոր ու բանավոր խոսքում իմ համարի փոխարեն ինձ համար գործածել, այդուհանդերձ չի սովորել սխալ համարել բանասեր ա, ասում ա, -ա օժանդակ բայով բաղադրված այլ հազարավոր-անհաշիվ կառույցները: Գրանց մերժելի լինելու գիտակցումը չկա: Ավելին՝ լեզուն հետևողականորեն գրկվում է օժանդակող բայից՝ անձանում: Եվ վաղուց օժանդակ բայը միայն բարբառներում կենդանի ու կենցաղավորված լեզվական իրողություն չէ. նա արդեն մախարարական աթոռներ է «գրավել», հայտնվել բարձր պաշտոնական խոսքում, թափանցել գրավոր խոսք ու գեղարվեստական գրականությանը:

Եվ այս դեպքում հարկ կա խոսելու ոչ թե սխալի, այլ վտանգի մասին: Թերևս ավելորդ էլ հիշեցնել, որ հայերենը էապես, էական լեզու է, հետևաբար խոսքից (գրավոր թե բանավոր) վտարել է-ն՝ նշանակում է հենց այդպիսի՝ էական հարված հասցնել հայոց լեզվի հմանեցիությանը ու ավանդականությանը, իսկ թե ժառանգորդական կապը նրա գագազանն տարբեր փոփոխելի միջև: Հիշեցնեմ նաև, որ է-ն սոսկ հնչյուն չէ՝ ա-ով դյուրին փոխարինելի, մինչդեռ է-ի դերակատարությունը իր վրա վերցնող ա-ն վերջինիս զիջում է հենց նրանով, որ սոսկ հնչյուն է: Հայը աղոթում է նախադասության մեջ է-ն նշանակում է՝ հայը աղոթի մեջ (արդթ)ում կա (է), մինչդեռ ինքնուրույն ու անմիտ է աղոթում ա-ն: Ո՛վ է դռան հետևում նախադասության մեջ ով է-ն նշանակում է ով կա. և դարձյալ իմաստագրվել ու անհմատ է ով ա-ն:

Անշուշտ, պիտի առանձնակի կարևորել է-ի խորհրդարանական արժեքը. է-ն Աստված խորհրդանշող բաներից մեկն է: «Է. դրո՞ւնեսլա՛ ի՛ սկզբն կոնդակա և ցամաքաց նշանակել՝ Աստուած, Ավետարան, Յանուն Աստուծոյ» (Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հատոր առաջին, 1836, ի Վենետիկ): Է-ն նաև

նշանակում է 7 կամ 7-րդ (յոթերորդ տառը հայոց այբուբենում)՝ սրբացած թիվ: Հետևապես, կանոնական հայերենից կույր ջանադրությամբ դուրս մղել է-ն՝ նշանակում է մեր լեզուն գրկել է-ով տոգորում խորհրդից ու աստվածային էականությունից:

Վերադառնանք «ա»ախտությանը: Ա օժանդակ բայի համընդհանուր գործածությունը որևէ բարբառի տիրույթում, անշուշտ, պարսավելի չէ, ավելին՝ ցանկալի է, որովհետև յուրաքանչյուր բարբառ գոյատևում է այդպեսով՝ ուրույն լեզվական օրենքներով, լեզվամտածողությանը, բառապաշարով: Ամեն բարբառ լեզվի մի երակ է բարբառում պահում. բազմաթիվ լեզվական իրողություններ անխաթար են մնում բարբառների մաքուր շերտերում միայն. շատ լեզվական անորոշություններ հատակվում են հենց բարբառների օգունությամբ: Բարբառը պիտի պահպանել: Հետևաբար, խոսքը բարբառներում գործառնող ա օժանդակ բայի մասին չէ:

Սակայն դուրս գալով բարբառային, ժողովրդական խոսքի սահմաններից՝ ա-ն ինքնաբերաբար ձևավորում է յուրատեսակ լեզվական արանդավորություն, որը, փոխարինելով կանոնական է-ին, ճանապարհ է բացում պարսկաճան «ա»ացման համար: Վտանգը մեծանում է ավելի, երբ համընդհանուր «ա»ացման դրոշակակիր է դառնում մտավորականը՝ նույնիսկ հեռուստատեսիոնից խորշելով «ա»ախտել: Վտանգավորից բացի նաև վիրավորական է, որ «ա»ախտում է մտավորական այն հատվածը, որ կրթության, մասնագիտության և դիրքի բերումով պիտի դա թույլ չտար. «ա»ախտում է ազգագրագետ, պատմաբանը, գրականագետը, լեզվաբանը:

Յավոք, մեր իրականության մեջ կա ավելի վատթարը՝ իր գրականությունն ա-ով է ստեղծում հայ գրողը և դա անում է նպատակադրված, հետևողականորեն: Բարբառային ա օժանդակ բայը նրա գրչի դավադիր կանթով հայտնվում է ոչ միայն բարբառախոս հերոսի լեզվում (որ կընկալեինք իբրև գեղարվեստական ոճավորում - և ընդամենը), ա-ն այլևս մերօրյա հայ գրողի ամբողջ խոսքում է՝ հերոսների թե հեղինակի: Ի՞նչ է սա. բանաստեղծի ասած՝ «պարապ օրիգինալություն», որով տաղանդի ու շնորհի ակնհայտ պակասն է թաքցվում, թե՞ վերն ակնարկված լեզվական պղանդավորություն, որ սկսել ու շարունակվելու դեպքում դեռ շատ ավերածություններ է գործելու: Գեղարվեստական ի՞նչ խնդիր է լուծում, օրինակ, «ա»ագիր Մարինեի «Պետրոսյանը»՝ «Հայկական ժամանակ» թերթում ժամանակ ու անժամանակ հայտնվելով հրապարակախոսական հոդվածներով, որ երևան են բերում հեղինակի գոտոզ ջանքը՝ ինքնաուրախ երևալու և բարոյախոսելու: Գրաբերի համար այս գրողը բացարձակ անհայտություն է, որը, սակայն, շատ դյուրին գտել է եթե ոչ գրականությանը, ապա գրեն հայ մամուլի պատմության մեջ տիշվելու իր պլուճուր հնարը: Քաղաքական-


իրապարակախոսական իր անվերջանալի խորհրդածությունների վերջին պտուղը Մ. Պ. -ն վերնագրել է՝ «Մեր գո-րության պահեստը» և ենթավերնագիր դրել՝ Հարևան մեկ ոգևորվում ա, մեկ հուսահատվում («Հայկական ժամանակ», հունվար 29, 2008 թ.): Աստված հարևանի հետ, բայց ընթերցողին է հուսահատ, ընթերցողին է շնչահեղձ այդ-օրինակ գրավոր խոսքից, այդ խոսքի շինձու-ստիվ ժողովրդախոսակցականությունից: Պատահական մի քաղվածք հոդվածից. «...Օրաթերթը, որ հավատի ջըլությունը վերջերս շփոթում ա «սկզբունքայնության» հետ, նկատեց, որ հունվարի 22-ը հիշատակում էր 88-ի փետրվարը»: Չգիտեմ՝ ընթերցողին ինչ է հիշատակում այս մեջբերումը, ինձ համար այն հնչում է հիշոց-հայիոյանքի մեծ, հիշոց՝ ուղղված մայրենի մաքրությանը: Հայ գրողը այնքան անբաշույց է խորշում է-ից, որ ակնա մտածում են, թե նա իր հակակրանքը տարածում է նույնիսկ հիշեցնել բառի՝ այս դեպքում միանգամայն «անմեղ» է-ի (ե գրությունը) վրա՝ հիշեցնել-հիշատակել: Ահավասիկ գլոբալ «ա»ացումը:

Տարբաբախտաբար, «ա»ախտում և նույն կերպ է գրում նաև գրողը, որ ծիրք ու տաղանդի պակաս բնավ չունի: Բանաստեղծ Արմեն Շեկոյանը հիշյալ՝ «Հայկական ժամանակ» ամսումով (ինչ զուգահեյություն) վկայ է գրում՝ իր հերոսներից գրեթե առանց բացառության խոսեցնելով «ա» օժանդակ բայով: Վեպը մեծ ծավալ ունի և դեռ մեծանալու է, թերևս՝ մի տասնյակ հատոր: Եվ եթե մեկը ցանկություն ու ժամանակ («հայկական») ունենա այն սկզբից մինչև վերջ կարդալու, ապա ա-երի անվերջ տարափից անկասկած ինքն է կդառնա, եթե այդպիսի չէ, «ա»ախտ ու «ա»ագիր: Այդ, Ա. Շեկոյան, ուզես թե չուզես՝ այդպես է: Ուզես թե չուզես, ընթերցողի համար Արարատյան բարբառն ու երևանյան քո խոսվածքը դու որպես «ոստանիկ» և օրինակելի-ընդօրինակելի լեզու են հրամայում:

Եվ այստեղ է, որ պիտի արտահայտեն ի՞նչ և մի մտահոգությունը՝ խոսքիս ընթացքը փորը-ինչ բեկելով:

Երևանը սիրելի է բոլորիս, սիրելի են, անշուշտ, նաև երևանցիները: Սակայն երևանաբնակությունը սկսել է հաճախ ու գնալով կարծես առավել անթաքույց «հակադրվել» գավառաբնակությանը, իսկ երևանաբնակությունը կամաց-կամաց համարժեք է դառնում տոհմիկ ազգական ծագման փաստաթղթին (համապատասխանաբար՝ բնիկ գավառացի լինելու փաստը անհերքելի փաստացի է շինական» անցյալի): Խիստ կասկածում են, թե որևէ գավառաբնակ լրագրող կամ դերասան կփորձեր հեռուստաթերթով տարիներ շարունակ համայնացնել իր բարբառից որևէ բան կամ արտասխառություն, ինչպես ջանադրաբար անում են մեր երևանաբնակ հեռուստաբեկիները՝ ամեն պատեհ առիթով հնչեցնելով, օրինակ, պապու, տատու սխալ-ստիվ-անբարեխոս ձևերը:

ավելին՝ պապու-տատու-ն միտում ունի դ ա ո ն ա լ ու երևանաբնակության յուրատեսակ բանավոր պագույցներից մեկը: Հանգուցնորեն ավելի գորեղ պագույցի արժեք է ստանում «ա»ախտությունը. «ա»ախտում են, ուրեմն, ամենայն հավանականությամբ, երևանցի են: Հենց երևանցի («ազնվական») լինելու ապացույցով ու թողտվությամբ չե՞ն հեռուստալեկաններին այն մեծադրոս «ա»ախտում, օրինակ, երգիծող Հրանտ Թոխատյանը, հանդիսավար Ֆելիքս Խաչատրյանը: Առաջինի հեռուստախոսքը, «ա»ախտությունից բացի, լեցուն է բարբառային բառերով (անշուշտ, նաև անկրկնելի պապու-տատու-ով), օտարաբանություններով: Արդ դերասանին զուցե հիշեցնե՞ք այն ճշմարտությունը, թե «ժողովրդական ոճ» կամ «խոսակցական ոճ» ասածը չի ենթադրում միայն և ընդամենը ժողովրդական-բարբառային բառ կամ արտահայտություն: Ո՞ճ կարելի է ձևավորել նույնիսկ բարբառաբեկում յուրօրինակությամբ առողանդությամբ միջոցով: (Հ. Սաթևա-յանի իր գեղընկ ծեր հերոսի բերանը չի էլ «բացում») ինքն է իր հերոսի մասին ասում. «Ծի՛ծաղե՛ք...», և այդքանը բավական է պարզ պատկերացնելու համար ոչ միայն գեղընկ, այլև լոռեցի՝ Ծերունու: Այդպես են ոճաբանում): Ֆ. Խաչատրյանի հեռուստախոսքը, ի տարբերություն գործընկերոջ համեմատ դեպի հավաք-կարուցիկ խոսքի, անկազմակերպ, անփույթ, մանվածապատ ու սխալաշատ է՝ համեմատ «ա»ախտությամբ. նա գրական հայերենի կատարելապես չի տիրապետում: Իսկ ինչու՞ առանձնացրի՞ք-հիշեցնե՞ք միայն այս երկուսին: Պատճառը մեկն է. նրանք՝ իրենց հանրահայտությամբ, հեռուստալեկաններին երևալու հաճախականությամբ, երիտասարդության վրա իրենց հեռազդեցությամբ, վտանգավոր կերպով նպաստում են գլոբալ «ա»ացմանը:



Այդ, «ա»ախտությունն այլևս ամենուր է՝ մամուլում, հեռուստաթերթում, գրականության մեջ: Նա իր համար տիրույթներ է նվաճում, և դա հեշտորեն հաջողվում է, քանի որ երկրիս բնակչության սովոր գանգվածը հենց «ա»ախտ է. տիրույթներ է նվաճում, քանի որ «ա»ախտությունը գրավում է մեր բարբառային քարտեզի մեծագույն մասը, և տարածական իմաստով նվաճելու բան, ըստ էության, չկա էլ: Բայց նա իր համար նոր՝ մինչ այժմ անխաթար-մաքուր պահվող տիրույթներ է նվաճում (գրականություն, գանգվածային լրատվամիջոց)՝ հատկապես գործերացած մեր հասարակության, մեր ազգի և պետության պատասխանատուների անտարբերությամբ ու թողտվությամբ: Նաև՝ նրանց իսկ մասնակցությամբ:

Եվ դա վտանգավոր է:



Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Յ Թ - Ա Ձ Դ - Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ԻՄ ԲԱԺԻՆ ԶԱՐԸ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՊՐՈՅՔ ԸՆՆՔԻՆ

Վանաձոր քաղաքի կենտրոնական պողոտայի (Տիգրան Մեծի 1) վրա կառուցվելու է Մարդու իրավունքների հայկական դպրոցի շենքը: Այս տարի կմեկնարկի շենքի շինարարությունը, որին իր աջակցությունը կարող է բերել յուրաքանչյուր ոք՝ իր բաժին քարը (ընդամենը 250 դրամ) դնելով շենքի պատին: Հիմնականում, մարդու իրավունքները համընդհանուր բնույթ ունեն: Եվ Մարդու իրավունքների շենքն էլ համընդհանուր ցանցերով է կառուցվում: Ահավասիկ, օրեցօր մեծանում է Ներդրումներ կատարողների թիվը:



ՆՈՐ ՊՐԱՏԱՐԻՈՒՆԵՐՆ ԵՆ՝

- Միջին 1-3-րդ դասընթացի սովորողները՝
1. Ռուզաննա Մանուկյան, ք. Երևան (4 քար՝ 1.000 դրամ)
2. Մանես Փառույսյան, Արարատի մարզ, գ. Հովտաշատ (2 քար՝ 500 դրամ)
3. Սուզաննա Պետրոսյան, Շիրակի մարզ, գ. Մեծ Մանթաշ (1 քար՝ 250 դրամ)
4. Արմինե Կարապետյան, Սյունիքի մարզ, ք. Կապան (2 քար՝ 500 դրամ)
5. Հասմիկ Մարդոյան, Գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ (2 քար՝ 500 դրամ)
6. Կարողուն Կարոյանյան, Կոտայքի մարզ, ք. Արևիկ (2 քար՝ 500 դրամ)
7. Երիկ Դավթյան, Արարատի մարզ, գ. Սարևաբլուր (2 քար՝ 500 դրամ)
8. Շողիկ Ղազարյան, ք. Երևան (1 քար՝ 250 դրամ)
9. Մարդ Հովհաննիսյան, Արագածոտնի մարզ, գ. Ներքին Բազմաբերդ (1 քար՝ 250 դրամ)

- 10. Թամարա Առաքելյան, Սյունիքի մարզ, ք. Կապան (2 քար՝ 500 դրամ)
11. Նազիկ Ուզունյան, Կոտայքի մարզ, գ. Բյուրեղավան (2 քար՝ 500 դրամ)
12. Սուսաննա Մովսեսյան, Կոտայքի մարզ, գ. Ավույն (2 քար՝ 500 դրամ)
13. Անուշ Կարապետյան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)
14. Մարիամ Մուսայան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)
15. Անահիտ Ղալաջյան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (1 քար՝ 250 դրամ)
16. Գայյա Սահակյան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (1 քար՝ 250 դրամ)
17. Կարոյան Կարապետյան, Սյունիքի մարզ, գ. Կոռնիձոր (2 քար՝ 500 դրամ)
18. Մուշեղ Նավասարդյան, Լոռու մարզ, ք. Ստեփանավան (2 քար՝ 500 դրամ)
19. Նարինե Ալեքսանյան, Կոտայքի մարզ, գ. Արիկ (4 քար՝ 1.000 դրամ)
20. Միհրայատ Ամիրջանյան, Կոտայքի մարզ, գ. Հասնիս (2 քար՝ 500 դրամ)
21. Կանո Ղարազոզյան, Լոռու մարզ, գ. Մեծ Այրում (2 քար՝ 500 դրամ)
22. Ազապի Մկրտչյան, Գեղարքունիքի մարզ, գ. Մեծ Մարտիկ (1 քար՝ 300 դրամ)
23. Արմեն Գաբրիելյան, Արարատի մարզ, գ. Արարատ (1 քար՝ 250 դրամ)
24. Լուսինե Բազարատունի, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)

ՀՍԻԿ նախագահության, աշխատակազմի և շահառուների անունից շնորհակալություն ենք հայտնում Մարդու իրավունքների կրթության զարգացմանը նպաստելու համար:

Ար այսօր Միջին շենքի կառուցման հանգանակությունը մասնակցություն է ունեցել 30 մարդ 7 մարզերից՝ ներդրելով 69.550 դրամ գումար:

Միջին շենքի կառուցման համար անհրաժեշտ է 440.880.000 դրամ կամ 1.763.520 քար:

ՆԿԻՐԱԲԵՐՎԵԼ Է 278 քար
ՄԱՎՏԵԼ Է 1.763.242 քար

Նշվեց ճշմարիտ խոսքի ջարհագով
Հրանդ Դինքի մահվան պարելիցը

Հունվարի 19-ին Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի ճիստերի դահլիճում տեղի ունեցավ Պուլի «Ակոս» շաբաթընթացի գլխավոր խմբագիր Հրանդ Դինքի մահվան տարելիցին նվիրված հիշատակի միջոցառում:

Իր ողբունի խոսքում ՎՊՄԻ-ի ղեկավար, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Խաչատրյանը ասաց. «Մենք այսօր նշում ենք Հրանդ Դինքի մահվան տարելիցը՝ կանխելու համար հետագա ողբերգությունները Դինքերի նկատմամբ»:

«Յուրաքանչյուր հայրորդի, յուրաքանչյուր ոք, ով սիրում է լսել ազատ խոսքը, զգաստությունը է նշում այս օրը: Հրանդ Դինքի սպանությունը 1915 թվականի եղեռնագործության կարմիր գույն է, և ողջ աշխարհը ոտքի կանգնեց ու դատապարտեց այս վայրագ սպանությունը: Մենք պարտավոր ենք, մենք պիտի տեր կանգնենք թե՛ մեր հերոսներին, թե՛ մեր զոհերին»,- ասաց Գուրգենը թեմի առաջնորդ Սեպուհ Եպիսկոպոս Չուլջյանը՝ հավելելով, որ թուրքական կառավարությունն անընդհատ հողորդում է. «Ըող Հայաստանի իշխանությունները չմոռանան, որ այսօր Թուրքիայում 60.000 հայ կա. սա խորելու լուրջ առիթ պիտի տա»:

Ցեղասպանության, թուրքական իրակամության, պոլսահայության և Հրանդ Դինքի մահի զեկուցումով հանդես եկավ «Ակոս» շաբաթընթացի հայաստանյան ներկայացուցիչ Տիգրան Լոբնազյանը՝ ասելով. «Թուրքիայի մերժականությունը ցեղասպանության հարցում բաժանվում է երկու մասի. ներքևներում չգիտեն, դրա համար են մերժում,

վերներում էլ գիտեն, դրա համար են մերժում»:

«Այսօր պոլսահայության չչնչն մասն է կարողանում հայերեն կարդալ և ճանաչման օգուտն է թուրքալեզու կամ ստարալեզու մամուլից: «Ակոս»-ի հիմնումը նպատակ ուներ հայ աղբյուրների ճշմարիտ խոսքը հասցնելու հայ մարդուն, թուրքին ու աշխարհին»,- թերթի հիմնադրումն այսպես բացատրեց գեղուցորդը:

Ձեկուցողը նշեց, որ 1990 թ. գալով Հայաստան հատկապես մեծ է եղել իր զարմանքը, երբ «տաքսու վարորդից մինչև համալսարանի դասախոս զարմանում էին, որ Թուրքիայում դեռ հայ է մնացել»: «Հրանդը, ինչպես շատերը կարծում են, ցեղասպանության հարցը առաջ քաշող ազգայնական չէր տես: Եթե միայն ազգայնական լիներ, չէին սպանի նրան: Սպանեցին, որովհետև պայքարում էր Թուրքիայում ժողովրդավարություն հաստատելու համար, իսկ դա խարխուլ է ներկայիս Թուրքիայի հիմքերը»:

Այնուհետ մանկավարժական ինստիտուտի ղեկավար Գուրգեն Խաչատրյանի ուղեկցությամբ ուսանողների երթը շարժվեց դեպի Սուրբ Աստվածածին եկեղեցի, որտեղ Գուրգենը թեմի առաջնորդ, գերազնորի Տեր Սեպուհ Եպիսկոպոս Չուլջյանը և հոգևոր դասը ոգևորչման արարողություն կատարեցին Հրանդ Դինքի հիշատակին, իսկ երթի մասնակիցները ծաղիկներ դրեցին մեծ եղեռնի զոհերի հիշատակ հավերժացնող կոթողին:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԴՐԱՅՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Միջազգային համագործակցության շրջանակներում Գերմանիայի Բունդեսթագի «Միջազգային խորհրդարանական կրթաբոշակ (ՄԻԿ/ԻՍՏ) 2009» ծրագիրը ասիմանել է երեք կրթաբոշակի Հայաստանի Հանրապետության բուհերի շրջանավարտների համար: Գերմանիայի խորհրդարանը՝ Բունդեսթագը, հնարավորություն է տալիս երիտասարդների ծանոթանալ Գերմանիայի խորհրդարանական համակարգին, քաղաքական որոշումների կայացման գործընթացին, ինչպես նաև փորձառություն ձեռք բերել խորհրդարանական աշխատանքների ասպարեզում:

Մրցութին կարող են մասնակցել մինչև 30 տարեկան Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն բարձրագույն կրթություն և գերմաներեն շատ լավ իմացություն:

«Միջազգային խորհրդարանական կրթաբոշակ 2009» ծրագրի տևողությունը հինգ ամիս է (2009 թ. մարտի 2-ից մինչև հուլիսի 31-ը):

Հարցողներին լրջնորդ Գերմանիայի Բունդեսթագի կողմից կազմված հանձնախումբը:

Սասնակցության դիմումները ընդունվում են մինչև հուլիսի 30-ը: Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունից (հեռ. 58-13-91) կամ www.Bundestag.de/ips էլեկտրոնային կայքից:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Վանա արդարություն» իրավական գիտամեթոդական հանդեսը հրավիրում է իրավագետ գիտնականներին, դասախոսներին, բարձր կուրսերի ուսանողներին՝ իրավունքին, մարդու իրավունքներին առնչվող թեմաներով գիտական, վերլուծական հոդվածներ ներկայացնել:

Գիտակամության չափանիշներին համապատասխանող հոդվածները կտպագրվեն հանդեսում՝ պարզևատարվելով հոնորարներով:

Հոդվածները կարելի է ուղարկել հանդեսի խմբագրությանը հետևյալ հասցեով՝ ՀՀ, ք. Վանաձոր, Շիրակացու 1-ին կր., թիվ 2
Հեռ.՝ +374 (322) 2-29-67
Հեռապատճեն՝ +374 (322) 4-47-81
Էլ. փոստ՝ gmanoukian@acrpc.am; lc@acrpc.am
Համացանցի էջ՝ www.acrpc.am

Թերթը հրատարակվում է Եվրոպական հանձնաժողովի ֆինանսական օժանդակությամբ: Բովանդակության համար պատասխանատվությունը կրում է միայն Հայկական ասիմանադրական իրավապաշտպան կենտրոնը: Թերթը ոչ մի դեպքում չի կարող դիտվել որպես Եվրոպական հանձնաժողովի դիրքորոշումն արտացոլող փաստաթուղթ:

Հրատարակության Դ տարի
Հիմնադրող և հրատարակիչ
Հայկական ասիմանադրական իրավապաշտպան կենտրոն
ՀՀ, 2003 թ. Վանաձոր, Շիրակացու 1-ին կր., թիվ 2
Հեռ.՝ +374 (322) 2-29-67
հեռապատճեն՝ +374 (322) 4-47-81
Էլ. փոստ՝ acrpc@acrpc.am; lc@acrpc.am
Համացանցի էջ՝ www.acrpc.am

Գլխավոր խմբագիր՝ Գևորգ Մանուկյան
Խմբագիր՝ Զեյնիդե Բաբոյան
Համակարգչային ձևավորող՝ Արմեն Սահակյան
Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Մեղբերդները անհերթ կան արտատպելիս հիղումը «Իրավական մշակույթին» պատկանող է:
Հրատարակումների բովանդակությունը կարող է չհամապատասխանել իրագրության կարծիքին:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Ստորագրված է տպագրության 2008 թ. 02. 13:
Տպագրակը՝ 2000:
Տպագրվել է «Չուլջակ-97» հրատարակչատանը:

Իրավական մշակույթ
Legal Culture
Приветствие культуры
Տարածվում է անվճար